դի ատենապետ տիար Հայկ Սուքիաս կրտսերի կողմից ուսման մեջ առավել առաջադիմություն ցուցաբերած սաներին շնորհվեցին մրցանակներ: Հատուկ մրցանակներ շնորհվեցին այս տարվա երեք շրջանավարտների, որոնք գերազանց գնահատականներով ավարտեցին Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի տասնամյա դասընթացը: Այնուհետև օրհնության խոսքով հանդես եկավ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը, որն իր մաղթանքում բարձր գնահատեց ճեմարանի այժմյան կրթական մակարդակը և սաներին հորդորեց ուսման մեջ լինել ավելի նախանձախնդիր:

ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹԸ ԵՎ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ապրիլի 6-ին, Ավագ Ուրբաթ, երեկոյան, Հիսուս Քրիստոսի չարչարանաց, խաչելության, մահվան ու թաղման հիշատակության օրը, բազմամարդ էր Կալկաթայի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին: Արարողությունը կատարեց հնդկահայոց հոգևոր հովիվ և Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը:

Արարողության ընթացքին Հիսուս Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը, զարդարված ծաղիկներով և ծառի ճյուղերով, պտտեցվեց եկեղեցու շուրջ՝ ի տես հավատավոր ժողովրդի, այնուհետև Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ մեկնելով ներկա հավատացյալներին օրվա խորհուրդը:

Արարողությանը իրենց մասնակցությունը բերեցին ինչպես Մարդասիրական ճեմարանի սաները, այնպես էլ Կալկաթահայ համայնքի հավատացյալ ժողովուրդը և Եկեղեցական վարչության անդամները:

Ապրիլի 7-ին Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում մատուցվեց Ճրագալույցի Ս. Պատարագ: Պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հոգեշնորհ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Օրվան պատշաճ սուրբգրային բոլոր ընթերցվածները կարդացին Մարդասիրական ճեմարանի սաները:

Ապրիլի 8-ին կրկին բազմամարդ էր Ս. Նազարեթ հայկական եկեղեցին: Փրկչի Հրաշափառ Հարության տոնի առիթով Ս. Պատարագ մատուցեց Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Հընթացս Սրբազան արարողության Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Ս. Հարության խորհրդի նշանակությանը քրիստոնյայի կյանքում: Նա ջերմորեն շնորհավորեց բոլորին Ս. Հարության տոնի առիթով՝ մաղթելով, որ Քրիստոսի հարության լույսն ու հույսը միշտ ուղեկից լինեն նրանց:

Արարողությանը ներկա էին երկօրյա այցով Կալկաթա ժամանած Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Աշոտ Քոչարյանը՝ տիկնոջ հետ, Կալկաթայի Եկեղեցական խորհրդի անդամները, հնդկահայեր, Մարդասիրական ճեմարանի սաները, ինչպես նաև Հնդկաստանում Ռուսաստանի Դաշնության հյուպատոսության ներկայացուցիչները: